

ՎԻՊԱԿԱՆ ՏԱՐՐԵՐԸ X—XII դարերի ՀԱՅ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

2. Գ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Ժողովրդական վեպի (այլ կերպ ասած՝ ժողովրդական, բանավոր մշակույթի) և X—XII դդ. հայ պատմագրության (այսինքն՝ պաշտոնական, գրավոր մշակույթի) առնչակցության հետազոտությունը առաջնակարգ կարևորություն ունի միջնադարյան հայ մշակույթի զարգացման միտումների պարզաբանելու տեսանկյունից¹։ Առայժմ, սակայն, ուսումնասիրողների ջանքերը նպատակաուղղված են եղել, գերազանցապես, ժողովրդական վեպի արձագանքները և անդրադարձումները օտար մատենագրությունների էջերում վերհանելու խնդրին²։ Մեր պատմիչների ծանոթությունը «նոր ժողովրդական վեպին» անվերապահորեն ընդունում էր ակադ. Մանուկ Աբեղյանը, սակայն նույնիսկ միջնադարյան հայ բանավոր և գրավոր գրականությունների մեծ գիտակը փորձեր չի ձեռնարկել բացահայտելու «Սասնա ծռերի» ազդեցությունը ժամանակաշրջանի հայ պատմական գրականության վրա։ Պատճառն այն է, որ մեր պատմիչների երկերում բացակայում են «Սասնա ծռերի» հերոսների հականե հանվանե հիշատակությունները, հիմնական սյուժետային գծերի վերապատումները։ Այսպիսով, նույնիսկ այն սպավորությունն է ստեղծվում, որ «նոր ժողովրդական վեպի» ժամանակաշրջանում հայ պատմիչները կորցրել են երբեմնի սերտ աղբյուր ժողովրդական բանավոր ստեղծագործությունների հետ, երբ գրավում էին վիպական ամբողջական ցիկլեր (Փավստոս Բուղանդ, Հովհան Մամիկոնյան)։

Ուշագիտ հետազոտությունը, այնուամենայնիվ, ցույց է տալիս, որ բանավոր ու գրավոր մշակույթների կենդանի կապը չի ընդհատվել, մասնավորապես, նաև X—XII դդ.։ Այդ ժամանակաշրջանի պատմիչները դիմել են հավաստի պատմական դեպքերը վիպական կաղապարով ավանդելու եղանակին, որի հետևանքով վիպական ստեղծագործության անմիջական շունչը դարձել է նվաղ նկատելի, այլ է դարձել իրադարձությունների ընկալումը։ Իրական պատմությունները ենթարկվել է վիպականացման, իրադարձությունների մասին կոնկրետ տեղեկությունների մակարերումը այսօրվա պատմաբանի համար չափազանց դժվարացել է։ Այս առումով առավել բնորոշը 717—718 թթ. Կոստանդնուպոլսի հայտնի պաշարման հետ կապված եղելությունների ավանդումն է Ասողիկի

¹ Ընդհանուր գիտական հարցադրման շուրջ տե՛ս А. Я. Гуревнч. Проблемы средневековой народной культуры. М., 1981; Культура и общество в средние века: Методика и методология зарубежных исследований.—Реферативный сборник. М., 1982.

² Տե՛ս N. Adontz. Les fonds historiques de l'épopée byzantine Digenis Akritas—Études Armeno—Byzantines, Lisbonne, 1965, p. 26—36; Հ. Մ. Բարթիկյան. Բյուզանդական «Դիգենիս Ակրիտաս» վիպերգությունը և նրա նշանակությունը հայագիտության համար.— «Պատմա-բանասիրական հանդես», 1963, № 3, էջ 185—194; R. Gulbenkian et H. Berbérian. La légende de David de Sassoun d'après deux voyageurs portugais du XVI^e siècle.—Revue des études Arméniennes, t. VIII, Paris, 1971, p. 175—188 (նույն հոդվածի հայերենը՝ Ռ. Վ. Կյուլիպենկյան. Հայ-պորտուգալական հարաբերություններ. Երևան, 1986, էջ 231—245)։ Ս. Բ. Հարությունյան, Հ. Մ. Բարթիկյան. «Սասնա ծռերի» արձագանքները «Շարաֆ-Նամե»-ում.— «Պատմա-բանասիրական հանդես», 1975, № 2, էջ 90—194; Ա. Ն. Տեր-Ղեոնդյան. Աղշիկ Տարոնի գրույցը XII դարի արաբական աղբյուրում.— «Պատմա-բանասիրական հանդես», 1978, № 3, էջ 265—286։

«Պատմութիւն տիեզերական»-ում: Ինչպես ժողովրդական վեպում, այնպես էլ Պատմութիւն այս դրվագում ռազմական բախմանը նախորդում է թշնամու՝ խալիֆի եղբոր, հատուկ ուղերձի առաքումը՝ ուղղված մայրաքաղաքի պաշտպանութունը գլխավորող բյուզանդական լեոն III (717—741) կայսերը: «Գիր ալպանութեան»-ում («գիր նախատանացն») խալիֆի եղբայրը սպանում է. «Արդ իմ ուխտ եղեալ է՝ չդառնալ յերկիր իմ, մինչև բարձից զթագաւորութիւնդ քո և կործանեցից զպարսպաւոր քաղաքդ քո, և զանուանեալդ Սոփիա, որ է տուն երկրպագութեան քո՝ արարից լուալիս զօրաց իմոց. և զփայտդ խաչիդ, որում երկրպագես՝ խորտակեալ ջախջախեցից ի գլուխ քո»³: «Անօրէն» թշնամու «գիր նախատանացն»-ի ամենածանր վիրավորանքը «սուրբ խաչին» հասցված անարգանքն է, որը, ըստ պատմիչի, կանխորոշում է հետագա բոլոր իրադարձութիւնները: Խաչին հասցված վիրավորանքը, ինչպես օրինակ, նրա վրա անհարկի երգվելը կամ նրան օգնության չկանչելը, ժողովրդական վեպում օրհասական վիճակի մեջ է դնում նույնիսկ սիրելի հերոսներին, ուստի վիպական ընկալմամբ նույնը պետք է կատարվի նաև խալիֆի եղբոր հետ: Քրիստոնյա մատենագրի գրչի տակ իրադարձութիւնների հետագա ընթացքը այսպես է պատկերվում: Կայսրը, հավատացյալների բազմութիւն հետ, դիմում է սուրբ Սոփիա, ուր «մինչև յերիս աւուրս զպաշտօն աղօթիցն անդադար կատարեն անճաշակ կացեալ»⁴: Լեոն III-ի այս քայլը և պատասխան նամակի համաբարտար ոճը շրջադարձային փոփոխութիւն են նշանավորում ժողովրդական վեպի հիման վրա մշակված այն մատենագրական կաղապարի մեջ, որն ավանդված է Մովսէս Խորենացու և Անանուի երկերում: Եթե ճիշտ նման իրադրութիւնում Հայկը նույնքան խիստ ոգով է պատասխանում և եռանդուն գործողութիւններ ձեռնարկում արժանի հակահարված տալու համար, ապա քրիստոնեականացված նոր պատկերացումների համաձայն, բյուզանդական կայսրը խստագոյնս արգելում է կովի ելնել հակառակորդի դեմ. «Եւ ինքն թագաւորն առեալ զանյաղթելի նշանն ի վերայ ուսոցն, և հայրապետն և ամենայն բազմութիւն ժողովրդոցն՝ մոմեղինօք և բուրմամբ խնկոցն բարձրացուցանէին զօրհնութիւնսն. և ելեալ ընդ դուռն քաղաքին՝ հարկանէր թագաւորն նշանաւ խաչին զչուրս ծովուն, ասելով երիցս. «Օգնեա՛ մեզ, Քրիստոս, փրկի՛լ աշխարհաց»: Եւ նոյն ժամոյն դզրդեալ խորք ծովուն խորասույզ առնէին զզօրսն Իսապիլի»⁵: Այսպիսով, եթե ժողովրդական վեպում խաչը օժտված է հրաշագործ լուծով, փրկում է հերոսներին, ապա քրիստոնյա պատմիչի գրչի տակ խաչի ուժը բացարձակացված է, խաչը ինքն է ջախջախում թշնամուն:

Հանուն ճշմարտութիւն նկատենք, որ Ասողիկը «Տիեզերական պատմութիւն» այս դրվագում հետևում է Ղևոնդին⁷, սակայն, համառոտելով հանդերձ վերջինիս անհամեմատ ընդարձակ պատումը, անփոփոխ է պահում իրադարձութիւնների զարգացման տրամաբանութիւնը և զաղափարախոսական նպատակաւորվածութիւնը: Օրինաչափ է, որ խաչից պատժվելու մոտիվը

³ Ս տ ե փ ա ն ո ս Տ ա ր ո ն ե ց ի Ա ս ո Ղ ի Կ. Պատմութիւն տիեզերական. Ս. Պետերբուրգ, 1885, էջ 128—129:

⁴ Նույն տեղում, էջ 129:

⁵ Տե՛ս Մովսիս Խորենացու Պատմութիւն Հայոց, աշխատութեամբ Մ. Արեղեան և Ս. Յառութիւնեան. Տփղիս, 1913, էջ 34—37: Ս ե բ ո ս. Պատմութիւն, աշխատասիրութեամբ Գ. Աբգարյանի. Երևան, 1979, էջ 49—50: Հերոսների բախմանը նախորդող իրադարձութիւնների ավանդման վիպական կաղապարի մասին տե՛ս Մ. Աբեղյան. Հայ վիպական բանահյուսութիւն.—Երկեր. Հ. Ա. Երևան, 1966, էջ 49—50:

⁶ Ս տ ե փ ա ն ո ս Տ ա ր ո ն ե ց ի Ա ս ո Ղ ի Կ, էջ 130:

⁷ Տե՛ս Ղևոնդ. Պատմութիւն Հայոց. Ս. Պետերբուրգ, 1887, էջ 105—110: Ինչպես և պետք էր սպասել, պատմիչը ոչ միայն չի անդրադարձել պաշարման և արարների պարտութիւն իրական հանգամանքներին, այլև նույնիսկ շփոթել է իրադարձութիւնների ժամանակադրութիւնը. տե՛ս Ղևոնդ. Պատմութիւն, թարգմանութիւնը, ներածութիւնը և ծանոթագրութիւնները Ա. Տեր-Ղևոնդյանի. Երևան, 1982, էջ 158, ծան. 94:

ևս մեկ անգամ հանդիպում է «Տիեզերական պատմության» այն դրվագում, ուր պատմվում է Սալարյան Աբու-լ-Հայջա ամիրայի կողմից Հոռոմոսի վանքի զմբեթի խաչը տապալելու և փոխարենը մի շարք անհաջողություններ կրելու և իր ծառաների ձեռքով խեղդամահ լինելու մասին⁸։ Ավելացնենք, որ պատե-րազմական դրվագներում հրաշագործ խաչի ճակատագրական դեր խաղալու մոտիվը համեմատաբար նոր երևույթ է հայ պատմագրության մեջ։ Բավական է ասել, որ Սեբեոսը ճիշտ նույն կերպ է նկարագրում Մուավիա խալիֆի (669—680) օրոք Կոստանդնուպոլսի պաշարումը, սակայն խալիֆի նամակում բացակայում է խաչի այսպիսումը և, համապատասխանաբար, արաբական նա-վատորմը խորտակվում է աստծու առաքած հողմի պատճառով⁹։

Ժողովրդական վեպի ոգին հատկապես զգալի է Մատթեոս Ուռհայեցու «Ժամանակագրության» առաջին մասում, որտեղ հեղինակը բազմիցս դիմում է վիպական կերպածին հայրենիքի պաշտպանության դրվագներ ավանդելիս։ Քննարկենք թեկուզ Ատրպատականի Մամլան ամիրայի դեմ Սպահունիքում տեղի ունեցած ճակատամարտի նկարագրությունը, որի մասին հանգամանո-րեն պատմվում է նաև Ասողիկի Պատմությունում։ Վերջինիս պատումում իրա-դարձությունների ավանդումը միանգամայն կոնկրետ է. տեղանքի, մասնա-կից ուժերի թվի, Մամլանին ընդդիմադիր հայ-վրացական բանակում փոխհա-րաբերությունների և հարակից այլ մանրամասների բարեխիղճ նշումով¹⁰։ Նույնիսկ այնպիսի արտառոց փաստը, ինչպիսին է վրացական զորամասից ընդամենը հինգ հոգու զոհվելը, պատմիչի կողմից չի մատուցվում որպես հրաշք։ Սակայն եթե Սպահունիքում տեղի ունեցած այդ իրադարձությունները նկարագրելիս ժամանակակից Ասողիկը չի հեռացել իրականությունից, ապա «Ժամանակագրության» հեղինակը նույն դեպքերն ավանդելիս վիպական ոգով հյուսելով պատումը՝ յուրօրինակ դրամայի է վերածել եղելությունների ըն-թացքը և միանգամայն այլ իմաստ հաղորդել այդ ամենին։ Հետևելով արդեն հիշատակված վիպականացման եղանակին, նա, որպես ճակատամարտից առաջ տեղի ունեցած ամենակարևոր եղելություն, հաղորդում է Մամլանի առ Դավիթ Կյուրապաղատ նամակի մասին, որը ոճական առումով հար ու նման է խալիֆի եղբոր ուղերձին. «Ո՛վ այլ դու Դավիթ, ամենաբարձր և ժանդ և նե-խեալ ալիքդ, զի ահա՝ թէ ոչ վաղվաղակի առաքեցես ինձ զհարկս տասն տարույ և պատանդ զորդիս ազատաց քոց և գիր ծառայութեան ինձ՝ այժմ հասեալ գամ ի վերայ քո մեծաւ զօրութեամբս իմով և ո՛վ իցէ այն, որ փըր-կեսցէ զքեզ ի ձեռաց իմոց, զի ահա շարաշար և դառն նեղութիւն ածից ի վերայ քո»¹¹։ Ժամանակագիրը, ճիշտ է, հիշատակում է Դավիթ Կյուրապաղատի հա-մապատասխան քայլերի մասին զորաբանակ հավաքելու ուղղությամբ, բայց ամբողջ պատումից երևում է, որ հեղինակն այդ չի համարում գլխավորը «անօրէն» հակառակորդին պարտության մատնելու առումով, քանի որ Մամ-լանի բանակն այնքան բազմամարդ է պատկերվում, որ սովորական իրադրու-թյան պայմաններում այն անպարտելի պետք է համարվեր։ Սակայն այս ան-գամ ևս հանգուցալուծման ժամանակ վճռորոշ դեր է խաղում այն հանգաման-քը, որ Մամլանը «զեկեղեցիս հրկէզ արարեալ խափանեաց յօրհնութեանցն և բազում բանս հայհոյութեանց ի վեր ի բարձունս խօսեցաւ առ Բարձրեալն»¹², որի պատճառով էլ գիշերը ձերբեկացաւ սակաւ ինչ անձրև ի վերայ լեռանց, և ամենայն լերինքն փայլատակէին իբրեւ զբոց հրոյ, և տեսին զայն զօրքն այ-լազգեաց, կարծեցին թէ այն ամենայն բազմութիւն զօրաց քրիստոնէիցն իցեն և յայնժամ առ հասարակ ի փախուստ դարձան»¹³։

⁸ Տե՛ս Ստեփանոս Տարոնեցի Ասողիկ, էջ 188—189։

⁹ Տե՛ս Սեբեոս, էջ 169—171։

¹⁰ Տե՛ս Ստեփանոս Տարոնեցի Ասողիկ, էջ 269—274։

¹¹ Մատթեոս Ուռհայեցի. Ժամանակագրութիւն. Վաղարշապատ, 1898, էջ 35։

¹² Նույն տեղում։

¹³ Նույն տեղում, էջ 37։

Վերջում նշենք ևս մեկ ընդհանրություն մի կողմից Ղեոնդի և Ասողիկի, մյուս կողմից՝ Մատթեոս Ուռհայեցու նախընտրած կաղապարների միջև, որը, ըստ երևույթին, ժողովրդական է։ Կոմից հետո թշնամին խուճապահար փախուստի է դիմում՝ ենթարկվելով քրիստոնյաների հալածանքին։ Զախչախումն այնքան լիակատար է դիտվում, որ բարոյապես ոչնչացված են համարվում անգամ թշնամիների առաջնորդները՝ խալիֆի եղբայրը և Մամլանը։ Առաջինը զենաց ամօթով յերկիր իւր, և այլ ոչ յաւել արկանել սուր ընդ անձն¹⁴, իսկ երկրորդը՝ զենաց ամօթով յաշխարհն իւր և ամբարսաւանեալ յոյժ ընդ Աստուած՝ յերկինս ոչ հայեցաւ բնաւ և զիւր անարժան աղօթսն ոչ մատուցանէր Աստուծոյ¹⁵։

Գաղափարախոսական նպատակաուղղվածությամբ աչքի է ընկնում Մատթեոս Ուռհայեցու երկի այն հատվածը, որտեղ պատմվում է Շադդադյան ամիրա Աբուլասվարի և Լոռե-Տաշիրի թագավոր Դավիթ Անհողինի զորքերի բախման մասին։ Այս անգամ ևս բախումնային իրադրության ծագումը սկսվում է թշնամու հանկարծակի հարձակումով և Աբուլասվարի կողմից պահանջների առաջադրումով։ Հեղինակը վերստին այն միտքն է անցկացնում, որ նույնիսկ Դավիթ Անհողինի կողմից զանազան միջոցներով հավաքած բանակն ի վիճակի չէր հակահարված հասցնելու թշնամուն։ Ուստի Դավիթը դիմում է հոգևորականների օգնությանը։ Քահանայական դասըն շարժեցան միաբան զքրիստոսական սուրբ նշանն և ի վերայ թշնամեացն դիմեալ յարձակեցան. և հուր սաստկապէս ցոլացեալ ի նոցանէ և եհար զզօրսն ալլազգեացն. և առ հասարակ ի փախուստ դարձան¹⁶։ Հոգևոր դասի մասնակցությունն էլ պայմանավորում է գերբնական ուժերի օգնությունը։ Այսպիսով, պատմիչն օգտագործում է ժողովրդական ընկալման առանձնահատկությունները, մասնավորապես հրաշագործ խաչի նկատմամբ հավատը¹⁷, հիմնավորելու համար ավատատիրական հասարակության առաջին արտոնյալ դասի՝ քրիստոնյա հոգևորականության սոցիալական դերի կարևորությունը և անհրաժեշտությունը։ Բացառված չէ, որ նմանօրինակ պատկերացումները, որոնք պաշտոնական մշակույթում պետք է կյանքի կոչվեին հոգևորականության ջանքերով, դեռևս միջնադարում թափանցել են նաև ժողովրդական մշակույթ։ Բոլոր դեպքերում «Սասնա ծռերի» բազմաթիվ հատվածներ պարզորոշ վկայում են հասարակությունում հոգևորականության մեծ դերի և գործունեության արդարացվածության մասին։ Ըստ ասացողների՝ Դավիթը խոր վշտով է ընդունում Մարութա վանքի ավերման և վանականների սպանման լուրը, քանզի վարդապետները Քարոզ կը տին ժողովուրդին», քահանաները ռոսկի սրկին կ'առնին իրանց ձեռ, օրենք կը տին ժողովուրդին», տիրացուները ռոսկի բուրվառ կ'առնեն իրանց ձեռ, խունկ կը ծխեն իմ ժողովուրդին¹⁸։

«Ժամանակագրության» առաջին մասի ուսումնասիրությունը թույլ է տալիս անդրադառնալ ասպետական հերոսական երգերի և պատմագրության փոխհարաբերությունների խնդրին։ Կարծիք է հայտնվել, որ հենց ասպետական վեպն է ընկած «Սասնա ծռերի» հիմքում¹⁸։ Երկու հակառակորդների և նրանց մենամարտերի գրեթե ծիսականացված այն նկարագրությունները, որոնք հաճախադեպ են և ակնհայտորեն նման թե՛ «Սասնա ծռերում» և թե՛ «Ժամանակագրությունում», թույլ են տալիս ասել, որ ասպետական երգերը ստեղծագործական ատաղձ են ծառայել նաև պատմիչների համար։ «Ժամանակագրությունում» պահպանված մենամարտերի նկարագրություններից առաջինում պատկերվում է Անիի նախավերջին թագավոր Հովհաննես-Սմբատի եղբայր Աշոտ արքայազնի և ումն վրացի իշխանի գոտեմարտը։ Հետաքրքրական է, որ այդ միջադեպը մտցնելու նպատակով հեղինակը նույնիսկ մեղանշում է պատ-

14 Ս տ ե փ ա ն ո ս Տ ա ռ ո ն ե ց ի Ա ս ո Ղ ի կ, էջ 130։

15 Մ ա տ թ ե ո ս Ու ռ հ ա յ ե ց ի, էջ 37։

16 Ն ու յ ն տ ե ղ ու մ, էջ 82։

17 Սասնա ծռեր. հ. Ա, Երևան, 1936, էջ 268։

18 Տե՛ս Ն ու յ ն տ ե ղ ու մ, էջ 26—31։

մական ճշմարտության առջև: Հովհաննես-Սմբատի և Աշոտի մասերը՝ Կատրամիդեն, որը մնացած բոլոր հայկական աղբյուրների և իր իսկ թագուհու արձանագրության համաձայն՝ Սյունյաց իշխանների տոհմից էր¹⁹, պատմիչի կողմից Գեորգի վրաց թագավորի դուստր է հայտարարվում²⁰: Պարզվում է, որ այդ անհրաժեշտ է եղել, որպեսզի բացատրվի վրաց իշխանի հայտնվելն Անիում: Որպես դեսպան Հովհաննես-Սմբատի արքունիք ժամանած վրացի իշխանը, իմանալով երկու եղբայրների միջև պատերազմի մասին, խոստանում է մարտի ժամանակ զերի վերցնել Աշոտին: Երկու ախոյանների բախման ժամանակ, սակայն, «իշխանն՝ Վրաց զնիզակն եղեալ ի վէրայ Աշոտոյ, իսկ Աշոտ իբրեւ զկայծակն ի ներքոյ անցանէր և հարկանէր զնա պողովատու» վրն ի վերայ սաղաւարտին և զերկաթապատ մարմինն պատառեաց մինչև ցտինսն և հանդերձ միջօրն յերկիր ընկնույր»²¹: Մարտի նկարագրությունը հիշեցնում է Դավթի և Մսրա Մելիքի բախումը, ուր թշնամին դարձյալ առաջինն է հասցնում հարվածը, բայց Դավթին անվնաս է մնում և սրով երկու կես է անում զրահավոր հակառակորդին: «Ժամանակագրության» այս դրվագում, սակայն, վիպականացումը դեռևս չի հասցված ծայրահեղության, միջադեպը կարող է իրական իրադարձության տպավորություն թողնել: Հաջորդ հատվածներում բեկեռացումը դառնում է բացարձակ, հերոսի հակառակորդը պատկերվում է որպես անհեթեթ հզորության մարմնացում, հանդես գալով իբրև խափշիկ զորական: Այսպես, դեմիկներին անակնկալ հարձակման ժամանակ հրոսակների դեմ է դուրս գալիս Վասակ Պահլավունին: «Սասնա ծռերի» հերոսների նման նա ևս «զգնույր զգեստ երկաթապատ... հասանէր ի վանք մի. հաղորդեցան ինքն և ամենայն զօրքն», որից հետո միայն «շարժեալ գային բազմութիւն բանակին Հայոց ի վերայ զօրացն ալլազգեացն»²²: Վասակի դեմ է դուրս գալիս Մսրա Մելիքին հիշեցնող մի սեռալ խափշիկ և այլ քաջ, որ և եւթն գայլ կոչէին զնա վասն զինչ որ եօթն գայլքն ի յոչխարսն և ի ջոկս նոցա գործէին, սա ևս առաւել ի մէջ զօրաց պատերազմին: Եւ ահա գայր խափշիկն իբրեւ զսեաւ ամպ որոտալով, որ բոց հատանէին ի վերայ զրահից նորա»²³: խափշիկ հսկայի հայտնվելն ահաբեկում է նույնիսկ Վասակի ամենահավատարիմ զինակիցներին, բայց հերոսը չի ընկրկում: Մենամարտի հանգուցալուծումը նույնական է նախորդ դրվագի հետ. «Յայնժամ հասանէր զազան այլն այն, ումբ եղեալ քաջին Վասակայ, որպէս զի առցէ զնա ի ծայր գեղարդեանն իւրոյ. և ի շտապս լեալ Վասակ ի ներքս դիմեաց և պողովատ թրովն ի վերայ սաղաւարտին քահեաց և յերկուս հերձեաց զխափշիկ քաջն, որ և մասունք մարմնոյն յերկիր անկանէին»²⁴:

Մատթեոս Ուռհայեցու հաջորդ վիպական հերոսն Անձեացյաց Դերենիկ թագավորի սպարապետ Ապղարիպն է, որը գերությունից ազատում է իր տիրոջը, բայց «ի զօրացն ալլազգեաց ոմն խափշիկ, այր հզօր և քաջ, ընթացեալ զհետ և հասանէր ի վերայ Ապղարիպայ. և որպէս առիւծ գռեաց Ապղարիպն, հասեալ ի վերայ նորա և զազանաբար հարկանէր զնա, և յերկուս բաժանեաց և ի վերուստ մինչեւ ցերանսն պատառեաց զնա»²⁵: Պատմիչը վերջին անգամ խափշիկ հակառակորդ է դուրս բերում վրաց լիպարիտ իշխանի դեմ, որը նախորդի նման բնութագրվում է որպես «այր հզօր և քաջ», սակայն այս անգամ խուսափում է մարտի մանրամասն նկարագրությունից, նշելով միայն լիպարիտի հաղթանակը «ալլազգի խափշիկի» նկատմամբ²⁶: Այսպիսով, նշված բոլոր դեպքերում Մատթեոս Ուռհայեցին օգտագործել է

19 Տե՛ս 2. Ա ճ ա ո յ ա ն. Հայոց անձնանունների բառարան. հ. Բ, Երևան, 1944, էջ 582:

20 Մ ա տ թ ե ո ս Ուռհայեցի, էջ 9:

21 Նույն տեղում:

22 Նույն տեղում, էջ 12:

23 Նույն տեղում, էջ 13:

24 Նույն տեղում, էջ 14:

25 Նույն տեղում, էջ 32:

26 Նույն տեղում, էջ 108:

բանահյուսական նյութը, վիպական կաղապարը՝ պատմական դեմքերի թերևս ոչ միշտ կոնկրետ իրական քաջագործությունները պատկերելու համար:

Սակայն ինչպիսի՞ն է եղել պատմիչի օգտագործած բանահյուսական նյութը, սոցիալական ո՞ր խավի պատկերացումների, ավանդույթների, մտածողության արգասիքն է եղել այն: Կարելի է պնդել, որ Մատթեոս Ուռհայեցին օգտվել է հայկական ասպետական այն երգերից, որոնց համանման ստեղծագործությունները միջնադարյան ֆրանսիական գրականության մեջ հանրահայտ են «chansons de geste» անվանումով²⁷։ Նկատի ունենք առաջին հերթին, «Ժամանակագրության» այն ընդարձակ հատվածը, որտեղ պատմվում է Խաչիկ իշխանի և նրա երեք որդիների՝ Հասանի, Ճնճղուկի և Իշխանի քաջագործությունների մասին: Խուսափելով վերապատումից, բավարարվենք նշելով, որ Հասանի հակառակորդն է «մի ոմն յայլազգեացն սեաւ մի և հօր», որին հերոսը «հանեալ զթուր ընդ երկուս պատառեաց», իսկ Ճնճղուկինը՝ «պարսիկ մի քաջ», որոնցից եղբայրները խլում են իրենց սպանված հոր ու կրտսեր եղբոր «պատերազմու ձին և զգեստն և իւր զնշանակն և՛ զթուրն»²⁸։ Ակնհայտ է, որ թվարկվում են ասպետական հանդերձանքի տարրերը, որոնց նկարագրությունը բավականին հարազատաբար պահպանվել է «Սասնա ծռերում»։ Առավել ուշագրավ է, որ զինավառության նկարագրությունների մեջ դիտվում են անգամ բառացի զուգահեռություններ: Այսպես, պատմիչը հիշատակում է «ոռւմբ»-ը, այսինքն՝ նիզակը, որը հաճախակի գործածվող զենքերից է «Սասնա ծռերում» և «Ճկուռ»-ը՝ այն զենքը, որը Ապլղարիպ սպարապետը մխրճում է Հեր քաղաքի դարպասի մեջ²⁹։ Ամենայն հավանականությամբ, Մատթեոս Ուռհայեցին նկատի է ունեցել «ճակ»-ը, որով մարտերից առաջ զինավառվում են վեսիի հերոսները: Ավելացնենք, որ Մատթեոս Ուռհայեցու «Ժամանակագրության» այս դրվագը վերապատմող միակ պատմիչը՝ Սմբատ Սպարապետը բառս հիշատակում է հենց «ճակ» ձևով³⁰։

Վերադառնանք ասպետական երգերի և պատմագրության փոխհարաբերությունների մասին հարցադրմանը: Դիտված է. որ պատմական դեպքերի նկարագրության ժամանակ ասպետական էպոսին դիմող արևմտաեվրոպական պատմիչների համար բնորոշ են ուրիշի ուղղակի խոսքի հաճախակի գործածությունը, որը կենդանացնում է պատումը և դրամատիկ դարձնում այն, ինչպես նաև հերոսներին բնութագրելիս բանավոր մշակույթից բխող կաղապարների կիրառումը³¹։ Այս ստեղծագործական սկզբունքներին միանգամայն հավատարիմ է նաև Մատթեոս Ուռհայեցին: Ուստի Մատթեոս Ուռհայեցու «Ժամանակագրության» վերևում քննարկված հատվածների աղբյուրների հարցը առաջ քաշելիս անհրաժեշտ է ընդունել բանահյուսական աղբյուրների, կոնկրետ՝ ասպետական երգերի առկայությունը և հրաժարվել գրավոր նախատիպի մասին վարկածից:

²⁷ Տե՛ս R. Grusset. Histoire de l'Arménie. Paris, 1947, p. 572—573.

²⁸ Մատթեոս Ուռհայեցի, էջ 32:

²⁹ Տե՛ս նույն տեղում, էջ 33:

³⁰ Օգտագործված է հղումված ձևը՝ «ճկով»։ տե՛ս Սմբատ Սպարապետ. հարեգիրք. Փարիզ, 1859, էջ 39: Աշխատության նոր հրատարակությունում (տե՛ս Սմբատ Սպարապետ. հարեգիրք. Վենետիկ, 1956, էջ 15), Մ. Չամչյանի ազգեցությունը, գերադասությունը տրված է «ճկուռ» ընթերցմանը: «Ճակ-ճակուռ» դարգացման համար հիմն. «ծակ-ծակուռ» քաջ-քաջուռ զուգահեռները, որոնք ճբակորդ-ի պարզաբանման առիթով բերում է Հ. Աճառյանը (տե՛ս Հայերեն արմատական բառարան. հ. Դ, Երևան, 1979, էջ 539): Դիտելիս խնդրո առարկա բառի ուղղական ձև է համարել «ճկուռ»-ը՝ շամաձայնելով նոր հայկազյան բառգրքի «ճիկուռ» վերականգնման հետ և որպես ապացույց բերելով գավառական չբոզուռ, չբոզ, չրգոռ ձևերը (Հայերեն արմատական բառարան. հ. Գ, Երևան, 1972, էջ 205): Թվում է, որակայն, որ առաջին վանկում ձայնավորների անվերապահ առկայությունը նաև գավառական ձևավերում արդեն բավարար հիմք է «ճկուռ» վերականգնումը կասկածի տակ առնելու և, որպես գավառականների նախորդող ձև, նաև «ճակուռ»-ը առաջարկելու համար:

³¹ Տե՛ս Робер де Кларя. Завоевание Константинополя, перевод, статья и комментарии М. А. Заборова, М., 1986, с. 90, 97.

Այդպիսի, արդեն նախորդ ժամանակաշրջանի պատմագրության մեջ մշակված, նախատիպը անկասկած է, սակայն, Ասողիկի հասար: Վերջինս, պատմելով փխաղաց Բեր թագավորի գեպի Հայաստան արշավանքի մասին, լեռվին հետևում է խորենացիական ուղենիշներին: Այսպես, փխաղաց թագավորը, որի պատմականությունը առաջին չի հաջողվել ապացուցել, հարձակվում է «բելապէս» և նախապես հանգուգն ուղերձ է հղում հայոց թագավորին: Այնուհետև Բերի բանակը կանգ է առնում գեաի փին և հանգուցալուծուար սկսվում է Արաս հայոց արքայի գետը մտնելով: Վճռական պահին հայոց թագավորը սրով «միջակտուր» է անում ախոյաններից շատերին և փախուսաի մատնում հակառակորդ բանակը³²: Այսպիսով, Ասողիկը ևս օգտվում է իրենց հիմքում րանհյուսական նյութերից (Հայկի և Բելի առասպել, Արտաշես արքայի մասին վիպական երգ, Տրդատ թագավորի կողմից րասինների արքային «միջակտուր» անելու պատմություն), սակայն ոչ անմիջականորեն և ինքնատիպ ձևով, այլ տուրք աւել մատենագրական ավանդույթին:

Ժողովրդական վեպից օգտվելիս նախորդ երկու պատմիչներից ասրերբվող ուղի է ընարել Անանուն ղրուցագիրը (Կեղծ Շապուհ Բագրաաունի): Նա Ասողիկի նման հեակողական չէ վիպական կերպաձևերին գիմելիս և ոչ էլ Մաաթեսու Ուհայիցու օրենակով ձգաում է առանձին ղրվագներում ընգարձակել պտտումն ասպետական մենամարարի հանգամանալից նկարագրութլամբ: Բանահյուսական առաա նյութը Անանուն ղրուցագրի երկում ավելի համաափ է բաշխված, վիպական տարրերը սփռված են գրեթե բոլոր գրուցներում:

Այսպիսով, ժողովրդական վեպի և պատմագրության առնչակցությունների նախնական իսկ պարղարանումը վկայում է, որ ժողովրդական (բանավոր) և պաշտոնական (գրավոր) մշակույթները X—XII դդ. ևս Հայաստանում մեկուսացված չեն եղել, աշխարհասանութլան ընդհանրությունը պայմանավորել է այդ մշակույթների մշտական կենգանի կապը, փոխթափանցումն ու փոխհարստացումը:

ЭПИЧЕСКИЕ ЭЛЕМЕНТЫ В АРМЯНСКОЙ ИСТОРИОГРАФИИ X—XII ВЕКОВ

А. Г. МАРГАРЯН

Резюме

Проблема взаимоотношений народного эпоса (народной, устной культуры) и армянской историографии X—XII вв. (официальной, письменной культуры) почти не привлекала внимания исследователей. Исследование показывает, что часть историков X—XII вв. (Матеос Урхаец, Степанос Асохик, Анонимный повествователь) испытывала значительное влияние народного эпоса. Струя народного эпического творчества отчетливо заметна в первой части «Хронографии» Матеоса Урхаеца, где автор неоднократно обращается к эпической модели повествования при передаче эпизодов защиты отечества и национальной чести армян. Вместо эпического героя в «Хронографии» на первый план выдвигается армянский царевич или же князь, который вступает в единоборство с самым выдающимся из войска противника и одерживает победу. Эпические мотивы прослеживаются и в тех эпизодах «Хронографии» Матеоса Урхаеца и «Всеобщей истории» Степаноса Асохика, где христиане одерживают победу благодаря помощи сверхъестественных сил. Рассказывая о вполне реальных событиях (например, оборона Константинополя Львом III Исаурийским), авторы строят повествование в духе эпоса. Идеологическая направленность рассказа историков обнаруживается достаточно четко—использовав особенности народного мировосприятия, обосновать важность и необходимость социальной роли христианского духовенства, первого привилегированного сословия феодального общества. Влияние эпических стереотипов и сюжетов чувствуется и в сочинении Анонимного повествователя, который, в основном, пользовался фольклорными материалами.

³² Տե՛ս Ստեփանոս Տարնեցի Ասողիկ, էջ 171—173: